

## ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԻՆՉ Է ԼԵՂՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՒՆԸ

Լեզուաբանութիւնն այն գիտութիւններից է, որոնց մասին հասարակութեան մէջ շատ քիչ բան է յայտնի, իսկ եթէ որևէ բան է բան յայտնի է, մեծ մասամբ կիսատ-պռատ և սխալ: Լեզուաբանութեան նկատմամբ այդ հանդամանքը որքան տարօրինակ, այնքան և ցաւալի է, որովհետև այդ գիտութիւնը ոչ միայն առաջին տեղն է գրաւում բոլոր հումանիտար գիտութիւնների մէջ իւր մեթոդի ճշտութեամբ և արդէն ձեռք բերած օրէնքներով, այլ և նա հանդիսանում է ամենակարևոր գիտութիւններից մէկը շնորհիւ այն բազմաստեսակ հետեանքների, որ նա առաջ է բերել իւր հարիւրամեայ գոյութեան ընթացքում և որոնք վերաբերում են մարդկային մտքի և քաղաքակրթութեան զանազան կողմերին: Այս է պատճառը, որ մենք կարևոր ենք համարում ներկայացնել «Արարատի» ընթերցողներին հետևեալ համառօտ տեղեկութիւնները լեզուաբանութեան էութեան և նշանակութեան մասին:

I. Լեզուաբանութեան առարկան և մեթոդը. Լեզուաբանութեան առարկան կամ օբեկտը կազմում է մարդկային լեզուն. ուստի անհրաժեշտ է որոշել լեզուի գաղափարը: Բայց նախ անենք մի քանի գիտողութիւններ, որոնք կը նպաստեն խնդրի պարզութեանը. կենդանիների լեզուն, որքան և հեռաբքբիւ լինի գիտութեան համար, այժմ չէ կարող նիւթ դառնալ լեզուաբանութեան և դուրս է մնում նրա շրջանից: Իսկ թէ ո՞ր լեզուն է օբեկտ դառնում լեզուաբանութեան, որոշ չափով պարզում է ինքը «լեզու» բառը, որ նշանակում է «բառերի լեզու», այսինքն մեր մտքի արտայայտութեան այն միջոցը, որտեղ որպէս մտքի նշաններ ընդունւում են բառերը և որի մէջ խոշոր և ակտիւ դեր է խաղում որոշ արտասանական գործարան—լեզուն: Սակայն բացի բառերի լեզուից գոյութիւն ունեն նաև մտքի արտայայտութեան այլ միջոցներ օր. պատկերապատման (միտք արտայայտող շարժումներ) և միմիկա, որոնք նոյնպէս կարող են լեզու կոչուել:

Լեզուաբանութիւնն անտես է անում նաև մտքի արտայայտութեան այդ ձևերը և ուրեմն լեզուաբանութեան օբեկտ

մ'նում է միայն բառերի լեզուն: Այդ «բառերի լեզուն» կատարել է և շարունակում է կատարել հսկայական դեր մարդկութեան կուլտուրական-պատմական կեանքում և հանդիսանում է լեզուի ամենակատարեալ ձևը:

Իսկ ի՞նչ է բառերի լեզուն: Առօրեաբար լեզուն որոշում են որպէս «հնչիւնների միջոցով արտայայտութեան ելակետ»: Սակայն այդ դէպքում չը պէտք է հասկանալ, որ լեզուն հէնց արտասանութեան պուոցեսի միջոցին առաջացած երևոյթն է, որի լսողական (ակուստիքական) կողմն է հնչիւնների մի շարք և նրանց առաջ բերած լսողական տպաւորութիւնը, իսկ արտասանական կողմը — որոշ միանային շարժումներ: Այդ երևոյթը կոչւում է «արտաբն լեզու», նա ունի անցողական ընդթ և նրա պաշտօնն է առաջացնել լսողի մէջ ևս այնպիսի հոգեկան վիճակ, որպիսին յատուկ է այդ բոսկէին լսողին: Իսկ վերջինիս մէջ խօսելու բոսկէին գործում է միտքը, որ կազմուած է մի շարք զուգորդուած մտապատկերներից, և որի արտաքին արտայայտութիւնը լինում է խօսքը կամ որ միևնոյն է — լեզուն: Արտաքին լեզուն, այսինքն վերոյիշեալ արտասանական և լսողական երևոյթների ամբողջութիւնը, խօսակցութեան ժամանակ առաջ է բերում լսողի մէջ ևս համապատասխան պատկերացումներ և նրանց զուգորդմամբ՝ նաև համապատասխան միտք, կամ որ միևնոյն է — ներքին լեզու: Ուրեմն ներքին լեզուն հնչիւնների, բառերի եւ նրանց կապակցութիւնների պատկերացումն է եւ այլապես կոչում է պատկերացումների (կամ մտապատկերների) լեզու. նա լեզուի հիմքն է, նրա գլխաւոր կողմը, որ սակայն իւր հերթին առաջ է դալիս և հետզհետէ կազմակերպում արտաքին լեզուի ակոստիքական տակ մանկութիւնից սկսած: Առանց այդ ներքին — մտապատկերների լեզուի արտաքին լեզուն անբովանդակ հնչիւնների մի շարք է:

Լեզուաբանութեան առարկան կազմում է ոչ թէ այս կամ այն մասնաւոր լեզուն, այլ մարդկային լեզուն ընդհանրապէս: Սակայն մարդկային լեզուն ընդհանրապէս գոյութիւն չունի, նա ֆիկցիա է. ֆիկցիա է նոյն իսկ այս կամ այն ժողովրդի լեզուն, որ հայերէնը, ռուսերէնը ևլն: Իրական են միայն անհատների լեզուները, որոնցից առաջանում են առանձին առանձին ակոստիքական լեզուները, իսկ այս վերջինների գումարը ներկայացնում է մարդկային լեզուն: Հետևապէս «մարդկաին լեզուն» գործ է ածւում այնպիսի հիմունքով, ինչպիսի հիմունքով գործ է ածւում որ «մարդ» բառը: Բոլոր մարդկային ցեղերը, որքան և տարբերում են միմեանցից զանազան արտաքին և ներքին յատկանիշներով, ունին սակայն

այնպիսի ակնյայտնի նմանութիւններ, որոնք թոյլ են տալիս մեզ խօսելու «մարդու» մասին, որպէս օրգանական աշխարհի որոշ ներկայացուցչի մասին: Նոյնպիսի ընդհանուր դժեր ունին նաև բոլոր գոյութիւն ունեցող, նոյնպէս և մեռած լեզուները և ուրեմն ուսումնասիրելով լեզուն ընդհանրապէս, մենք պիտի հետաքննենք կենսոն դարձնենք բոլոր լեզուական նմանութիւնները եւ տարբերութիւնները եւ աւելացնենք գտնել նրանց առաջացնող պատճառները:

Լեզուն զարգացման մի կէտի վրայ կանգնած չէ. նա ենթակայ է մշտական փոփոխութեան, որ տեղի է ունենում ժամանակի ընթացքում: Այդ փոփոխութիւնը լինում է երեք տեսակ 1) փոփոխութիւն, որ վերաբերում է լեզուի բաղադրիչ մասերին, այսինքն ինչպէս բառերի հնչիւնային կողմին, այնպէս և նշանակութեան: 2) Փոփոխութիւն, որ առաջ է դալիս շնորհիւ լեզուական որոշ ֆակտորի կորստի. 3) փոփոխութիւն, որ մասնում է լեզուի մէջ լեզուական նոր ֆակտորի երևան գալով: Լեզուի փոփոխութիւնը իւր բոլոր մանրամասնութիւններով կարելի է նկատել, եթէ մենք համեմատենք հայկական բարբառները, օր. Ղարաբաղի, Վանի, Մուշի և ին. և կամ գրական աշխարհիկ լեզուն գրաբարի հետ:

Այսպիսով լեզուաբանութիւնը պէտք է ուսումնասիրէ լեզուն վերջինիս փոփոխութեան, հետևապէս և յաջորդական զարգացման ընթացքում, ուստի լեզուաբանութեան առարկան է լեզուն որպէս պատմական իրողութիւն, կամ որ միևնոյնն է, լեզուաբանութիւնը լեզուի պատմական ուսումնասիրութիւնն է:

Սակայն լեզուն սոցիալական երևոյթ է. ինչ փոփոխութիւնների ենթակայ է որևէ հասարակական ընկերակցութիւն, նոյնպիսի փոփոխութիւններ կրում է և նրա օրգանը-լեզուն: Սրևէ հասարակութեան մանր մասերի բաժանուելը առաջացնում է նման երևոյթ նաև լեզուի մէջ, իսկ այդպիսի մի բանի մասերի միանալը և համախմբումներ կազմելը պատճառ է դառնում ազդակից և ինքնուրոյն լեզուների կազմակերպուելուն: Այստեղից հետևում է լեզուի ոչ միայն պատմական, այլև համեմատական ուսումնասիրութիւնը: Եթէ մենք զբաղուենք սլաւոնական լեզուների (օր. ռուսաց, բուլղարացոց, սերբերի, լեհացոց, չեխերի և ին.) համեմատական ուսումնասիրութեամբ, մենք անխուսափելիօրէն կը հանդիպենք մի շարք երևոյթների, որոնք ընդհանուր են վերոյիշեալ բոլոր լեզուներին: Այդ հանգամանքը կարելի է բացատրել միայն այն մտքով, որ այդ երևոյթները ժառանգութիւն են մնացել յիշեալ լեզուներին այն մայր լեզուից, որից նրանք ծագել են, կամ

այսպէս կոչուած սլաւոնական նախալեզուից: Այդ նախալեզուն ուրեմն կը ներկայացնի լեզուի զարգացման այն ֆազիսը, որ զիֆֆերենցիացիայի ենթարկուելով առաջացրել է վերոյիշեալ սլաւոն լեզուները շնորհիւ զուգընթաց զիֆֆերենցիացիայի, որ միաժամանակ տեղի է ունեցել նաև սլաւոն հասարակութեան մէջ: Եթէ նոյնպիսի համեմատական ուսումնասիրութիւն կատարենք հայկական բարբառների և գրաբարի վերաբերմամբ, կը ստանանք նման հետեանքներ, այսինքն բազմաթիւ լեզուական երևոյթներ, որոնք յատուկ են այդ բարբառներին և գրաբարին (որ նոյնպէս հայերէնի մի բարբառն է եղել), և որոնք կը վերագրուեն այս դէպքում նախահայերէնին կամ նոյն ճախի նախալեզուին:

Այնուհետև սլաւոնական և հայոց նախալեզուների և մի քանի այլ նախալեզուների (յունարէն, լատիներէն, հնդկերէն և շն.) համեմատական ուսումնասիրութիւնը առաջ կը բերէ նոյնպէս մի շարք լեզուական երևոյթներ, որոնք ընդհանուր են այդ լեզուներին, և որոնք հաստատելով այդ բոլոր լեզուների ցեղակցութիւնը, միաժամանակ բաց կանեն մեր առաջ նաև նրանց նախալեզուի հեռանկարը:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ լեզուաբանութիւնը որպէս «լեզուի պատմական ուսում» զբաղում է լեզուների ազգակցական յարաբերութիւնների համեմատութեամբ: Սակայն այս միայն մի մասնաւոր, թէպէտև շատ նշանաւոր երևոյթ է լեզուաբանութեան մէջ: Լեզուների ցեղակցութիւնն անհրաժեշտ պայման չէ և լեզուաբանութեան նպատակն է ուսումնասիրել, ինչպէս վերևը յիշած է, ընդհանրապէս «լեզուական նմանութիւնները և սարքերութիւնները և նրանց առաջացնող պատճառները»: Իսկ այդ հնարաւոր է դարձեալ համեմատական միջոցներով: Աւտի համեմատութիւնը լեզուաբանութեան գլխաւոր մեթոդն է և առանց համեմատութեան անհնարին է լեզուի դիտական ուսումնասիրութիւնը. այս է պատճառը, որ լեզուաբանութիւնը կոչուում է նաև «համեմատական լեզուաբանութիւն»:

II. Լեզուաբանութեան յարաբերութիւնը միւս գիտարիւնների հետ: Լեզուաբանութիւնն, ինչպէս ասացինք զբաղում է լեզուի համեմատական — պատմական ուսումնասիրութեամբ: Բնականաբար նա պատկանում է կուլտուրական-պատմական կամ հոգեմանկտար (իսկ ըստ Վուլգի-Տոբեկան) դիտութիւնների թւին, որոնք օրինելի ունենալով մարդկային հոգու զարգացումը և արտադրութիւնները, հակադրուում են բնական գիտարիւններին: Ինչպէս յայտնի է, կուլտուրական — պատմական

գիտութիւնները ուսումնասիրութեան ենթակայ երկոյթները լինելով արդիւնք բազմաթիւ և բազմատեսակ գործօնների (Ֆակտորների), չափազանց բարդ են, ուստի և խիստ դժուարացնում են ուսումնասիրութեան գործը: Այս է պատճառը, որ այդ կարգի գիտութիւնները մեծ մասամբ զուրկ են հաստատա մեթոդներից և դեռ շուրջն սահմանուած օրէնքներ: Մինչդեռ բնական գիտութիւնները գտնուելով աւելի նպատաւոր պայմանների մէջ, ոչ միայն կարողացել են ձեռք բերել որոշ օրէնքներ, այլ և այդ օրէնքների վրայ հիմնուած՝ գտել կամ լուսարանել են բազմաթիւ ֆակտեր: Լեզուաբանութիւնը իւր առարկայի պարզութեամբ, մեթոդներով, բազմաթիւ օրէնքներով և սրանց առաջացրած հետեւանքներով շատ աւելի մօտ է կանգնած բնական գիտութիւններին և այդպիսով, չը նայած իւր շնչին անցեալին, ներկայանում է մեզ որպէս ամենաուղիղը ըստը կուլտուրական—պատմական գիտութիւններից: Այսպիսի հիմք ունենալով Շլայխեր, ամենանշանաւոր լեզուաբաններից մէկը, գնում էր լեզուաբանութիւնը բնական գիտութիւնների թւում:

Լեզուաբանութիւնը գտնուում է մօտիկ յարաբերութեան մէջ մի շարք գիտութիւնների հետ, որոնցից կարևորները հետեւեալներն են.—

1. Բանասիրութիւն (Ֆիլոլոգիա). Այս գիտութիւնն զբաղւում է այս կամ այն ազգի կամ նման պայմաններում գտնուող հարեան ազգութիւնների կուլտուրական պատմութեան բուրբ արտայայտութիւնների ուսումնասիրութեամբ: Բանասիրութեան օրինակ կարող են լինել սուրբմի լեզուն, գրականութիւնը, քաղաքական—անտեսական հարցեր, գեղարուեստը, պատմութիւնը ևլն: Այդպիսով ստացւում են գերմանական, սլաւոնական, յունա-հռոմէական, վրա—հայկական բանասիրութիւն ևլն:

Բանասիրութեան մէջ առաջնահարգ տեղ բռնում է լեզուի ուսումնասիրութիւնը (որ սահայն ունի գործնական նպատակ) և շնորհիւ այդ հանգամանքի բանասիրութիւնը շփոթւում է շարունակ լեզուաբանութեան հետ, որ բոլորովին այլ նպատակի է ձգտում: Լեզուաբանի կամ լինգուիստի համար լեզուն բնդհանուր մարդկային կուլտուրայի մի կողմն է, որ առանձին ուսումնասիրութեան կարօտ է և որ ունի բազմաթիւ մասեր—մասնաւոր լեզուներ: Իսկ վերջիններիս գիտական ուսումնասիրութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մշակուած են բնդհանուր հիմունքներ և մասերի մէջ ևս կապ է պահուում: Այսպէս չէ նայում գործին բա-

նասե՞րը կամ ֆիլոլոգը: Նրա համար լեզուն, ինչպէս և գրականութիւնը, պատմութիւնը ևլն. կազմում են մի մասն այն ազգի կամ ազգերի քաղաքակրթութեան, որով նա հետաքրքրոււմ է ներկայ բոլորում. ֆիլոլոգն ուսումնասիրում է յունարէնը և լատինարէնը որպէս յունա-հռոմէական քաղաքակրթութեան մի ճիւղ, նպատակ ունենալով պարզել և ամբողջացնել այդ քաղաքակրթութիւնը, իսկ լինգուիստի համար նոյն լեզուները օրինակ են ծառայում՝ հնդեւրոպական կամ ընդհանրապէս մարդկային լեզուի զանազան երևոյթները լուսարանելու և զանազան լեզուական օրէնքներ հաստատելու:

2. Բնախօսութիւն. լեզուաբանական մի որոշ դիսցիպլին-հնչիւնաբանութիւնը-դրադուում է հնչիւնների ֆիզիքական և բնախօսական հիմքերով: Նոյն հարցով դրադուում է նաև բնախօսութեան մի ճիւղը, որ կոչւում է արտասանութեան բնախօսութիւն (Փիզիոլոգիա բնի): Այդպիսով լեզուաբանութիւնը հնչիւնների արտասանութեան կողմից կապւում է բնական գիտութիւնների և յատկապէս բնախօսութեան մի որոշ բաժնի հետ:

3. Հոգեբանութիւն. լեզուի մէջ գոյութիւն ունին բազմաթիւ և բազմատեսակ հնչիւններ, ըստ չէ կարելի ասել, որ նրանք միշտ ունին իմաստ կամ նշանակութիւն: Միայն որոշ հնչիւններ կամ նրանց կոմպլէքսներ կապուած են որոշ իմաստի հետ և այդ հնչիւնների ու իմաստի մէջ եղած կապն է, կամ աւելի ճիշտ՝ լսողական և իմաստ ներկայացնող մտապատկերի մէջ եղած կապն է, որ ուսումնասիրում է լեզուաբանութիւնը և միաժամանակ նաև հոգեբանութիւնը: Սակայն այդ երևոյթը միայն ընդհանուր առմամբ, ընդհանրապէս մարդկային լեզուի վերաբերմամբ կարող է նիւթ դառնալ հոգեբանութեան. մասնաւոր լեզուների նկատմամբ այդ հարցը դուրս է գալիս հոգեբանութեան շրջանից և սեպհականութիւն է դառնում լեզուաբանութեան, այսինքն մարդկային լեզուների համեմատական պատմական ուսումնասիրութեամբ դրադուող գիտութեան:

4. Պոստմոբիւն. Մենք ատեսնը, թէ ինչ զոխադարձ յարաբերութեան մէջ է գանւում լեզուն հասարակական զանազան ընկերակցութիւնների հետ: Այստեղից հասկանալի է և այդ երկու տարրեր նիւթերով դրադուող գիտութիւնների՝ լեզուաբանութեան և պատմութեան մէջ եղած կապը:

Լեզուի գիտական ուսումնասիրութիւնը տալիս է մեզ բազմաթիւ պատմական փաստեր, մեծ մասամբ չափազանց կարեւոր, որոնք պատմութեան սեպհականութիւն են դառնում. օր. հնդկաստանի հայերի գաղթը Հայաստան (հայոց պատմութեան նախապատմական շրջանից), բազմաթիւ գաղթեր այս կամ այն ազգերի մէջ այլ և այլ երկրներում, զանազան ազգերի փոխադարձ կուլտուրական յարաբերութիւններ ելն: Իւր հերթին պատմութիւնը լուսաբանում կամ հաստատում է զանազան լեզուաբանական հարցեր, գլխաւորապէս բարբառաբանութեան վերաբերեալ:

Նկատուութիւն. «Լեզուաբանութեան» տեղ յաճախ գործ են ածուում այլ տերմիններ, ինչպէս օր. համեմատական լեզուաբանութիւն, լինգուիստիկա, լեզուագիտութիւն: «Համեմատական» է կոչուում լեզուաբանութիւնը գլխաւորապէս հնդկաստանի «համեմատական» լեզուաբանութեան կամ «համեմատական» քերականութեան» ազդեցութեան տակ: Մենք տեսանք, որ լեզուաբանութեան մէջ «համեմատական» է իտալապէս մեթոդը, ուստի լեզուաբանութեան հետ կապուած է և ինքն ըստ ինքեան հասկանալի է համարուում այդ համեմատական մեթոդը: Հետեւաբար լեզուաբանութեան կողքին «համեմատական» բառը ոչ մի նոր բան չէ աւելացնում և միայն աւելորդ կրկնութիւն է:— «Լինգուիստիկա», սր բաւական անյաջող լատինական տերմին է lingua բառից, շատ գործածական է ուրիշ լեզուներում և հայերէնում ևս կարող է գործածուել լեզուաբանութեան իմաստով. Իսկ «լեզուագիտութիւն» գաղափարը սխալ է վերադրել լեզուի գիտական ուսումնասիրութեան, որովհետեւ լեզուագէտ կարող է համարուել ամեն մէկը, որ գործնականապէս գիտէ մի քանի լեզուներ (օր. թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն) և որ լեզուաբանութեան հետ ոչ մի առընչութիւն չունի: «Լեզուագիտութիւնը» բացի լեզուաբանութիւնից գործ է ածուում նաև բանասիրութեան կամ ֆիլոլոգիայի տեղ:

III Լեզուաբանական դիօցիպլիններ. Լեզուաբանութիւնը բաժանուում է մի քանի բաժինների կամ զիսցիպլինների, որոնցից իւրաքանչիւրը մի որոշ տեսակէտով է լուսաբանում լեզուական հարցերը: Ինչպէս տեսանք, լեզուաբանութիւնը լեզուի պատմական ուսումնասիրութիւնն է. բայց կարելի է ուսումնասիրել լեզուն նաև ոչ պատմական տեսակէտով, այսինքն առանց պատմականօրէն լուսաբանելու լեզուական նիւթը, այլ վերցնելով լեզուն միայն մի յայտնի պատմական

մոմենտում: Վերջին դէպքում կը ստացուի լեզուի ոչ թէ պատմական, այլ նկարագրական ուսումնասիրութիւնը: Այդպիսով վերոյիշեալ լեզուաբանական զիսցիպլիններն էլ կարող են լինել ոչ ստմական եւ նկարագրական: Այդ զիսցիպլինները հետեւեալներն են:

1. Ֆոնետիկա (նկշխնաբանութիւն). լեզուաբանութեան այս բաժնում ուսումնասիրուած է լեզուի արտասանական-լսողական հողմը-կապուած համապատասխան հոգեկան վիճակների հետ: Որպէս լեզուաբանութեան պատմական զիսցիպլին, ֆոնետիկան ուսումնասիրուած է մէկ կամ մի քանի ազգակից լեզուների հնչիւնների պատմութիւնը և այն օրէնքները, որոնցով պայմանաւորուած են այդ հնչիւնների զանազան փոփոխութիւնները: Իսկ նկարագրական ֆոնետիկան տալիս է մեզ մի որ և է լեզուի կամ բարբառի հնչիւնների նկարագիրը մի որ և է պատմական մոմենտում:

2. Մորֆոլոգիա կամ ձևաբանութիւն կոչուում է լեզուաբանութեան այն ճիւղը, որ զբաղուում է բառերի ձևերով և նրանց ձևական նշանակութեամբ և նոյնպէս լինում է պատմական և նկարագրական. Պատմական ձևաբանութիւնը ներկայացնում է բառերի զանազան ձևերի պատմութիւնը, իսկ նկարագրականը տալիս է լեզուի մի որոշ պատմական մոմենտի բառական ձևերի նկարագիրը: Սովորական գոյրոցական քերականութիւններում ձևաբանութիւնը (երբեմն նաև հնչիւնաբանութիւնից կցկառն առկէկութիւններ) կազմում է քերականութեան առաջին մասը, որ սխալմամբ կոչուում է էտիմոլոգիա:

3. Սինտաքսիս (շարահիւսութիւն, համաձայնութիւն): Այս լեզուաբանական զիսցիպլին նուսումնասիրում է խօսքեր (նախադասութեան) ձևերը և նրանց ձևական նշանակութիւնները: Շարահիւսութիւնը նոյնպէս լինում է պատմական և նկարագրական. Պատմական շարահիւսութեան մէջ տրուում է խօսքի շարահիւսական ձևերի պատմութիւնը, իսկ նկարագրականում—լեզուի մի որոշ գրութեան շարահիւսական ձևերի նկարագիրը:

Այս երեք զիսցիպլինները կազմում են լեզուաբանական մի ընդարձակ բաժին, որ կոչուում է քերականութիւն:

4. Բառարան (լեքսիկոն, լեքսիկոլոգիա).—լեզուի միայն որոշ հնչիւնների և հնչիւնին կոմպլէքսների հետ են կապուած լինում նշանակութիւններ. այդպիսի հնչիւնային կոմպլէքս-

ներեն բառերը: Բառարանը պարզում է բառերի (և նրանց կապակցութեան) հնչիւնային կողմի և նշանակութեան մէջ եղած կապը: Գործնական բառարաններն առաջարկում են մի որևէ լեզուի բառամթերքը նշանակութիւնների հետ, իսկ պատմական բառարանը ներկայացնում է իւրաքանչիւր բառի ձևի և իմաստի փոփոխութիւնը զանազան պատմական շրջաններում: Այգպիսի բառարանների թիւը դեռ շատ քիչ է: Պատմական բառարանների թիւն են պատկանում նոյնպէս և սուգաբանական բառարանները (Etymologische Wörterbücher, Этимологические словари) որտեղ համեմատական պատմական հիմունքներով բացատրում է բառերի ծագումը և կազմութիւնը (էտիմոլոգիան):

5. Սեմասիոլոգիա կամ սեմանսիկա (իմասաբանութիւն) կոչւում է լեզուաբանութեան այն ճիւղը, որի օբեկտտ են կազմում իմաստները կամ նշանակութիւնները լեզուի մէջ և նրանց փոփոխութիւնները. իմաստաբանութիւնը ևս կարող է լինել պատմական (նշանակութիւնները պատմութեան մէջ) և նկարագրական (նշանակութիւնները որևէ պատմական մոմենտում. օր. հոմանիշ բառեր, ոճական տարբերութիւններ ևլն):

6. Լեզուաբանութեան ներածութիւն կամ սեսութիւն կոչւում է լեզուաբանութեան այն տեսական մասը, որտեղ քննութեան են առնւում լեզուին ընդհանրապէս (կամ որ մի և նոյն է, բոլոր լեզուներին) յատուկ զանազան հարցեր, որոնց լուծարանութիւնն անհրաժեշտ է լեզուին դիտակցօրէն վերաբերուելու համար: Այգպիսի հարցեր են օր. հեռակեցանները. ինչ է լեզուն, ինչ ոյժեր են գործում և ինչ փոխադարձ ազդեցութեամբ լեզուի մէջ, ինչպէս են առաջանում հնչիւնները և նրանց փոփոխութիւնները, մորֆոլոգիական ձևերի ծագման և փոփոխութիւնների պատճառները, իմաստաբանական փոփոխութիւններ ևլն: Առանց այդ հարցերը լեզուաբանօրէն պարզելու միշտ կարելի է մոլորութիւնների մէջ ընկնել մասնակի լեզուների զանազան երևոյթների ուսումնասիրութեան ժամանակ:

7. Համեմատական փերկանութիւն. եթէ համեմատենք ռուսերէն ВОЛКЪ բառը լեհերէնի wilk, բուլղար. ВЪЛК և հին սլաւոներէնի ВЛЪХЪ բառերի հետ և կամ ռուսեր. ПЕНА, լեխերէն pëna, լեհերէն piana, բուլղար. ПЕНА ևլն. մենք հեշտութեամբ կ'եզրակացնենք, որ այդ լեզուներում բոլոր յիշած բառերն առաջացել են երկու հիմնական ձևերից մի քանի փոփոխութիւններով: Գոթերէնի tainn, հին իսլանդերէն tío,

անգլոսաքսոնէն tien, հին սաքսոններէն tehan, հին բարձր-գերմաններէն zehan և նոր բարձր գերմաններէն zehn միևնոյն բառն են զանազան փոփոխութիւններով, որ համապատասխանում է հայերէն տասն բառին: Նոյնպէս միևնոյն ծագումն ունին և միայն չնչին փոփոխութիւնների են ենթարկուած հայերէն լեզուի՝ գրաբարի և բարբառների հետեւեալ բառերը. հինգ-լինդ-լինդգ-հէնգ-հանգ, գայ-(կու)կյեա՝-իկ յա՛ լի-կալիսա-կյա՛ լիսա-գէլիսա, զնացեալ-բէլցա՛ լ(ըն)-գյա՛ ցիր(են) կացեր(են)-նա՛հա՛ծ(ըն), գբար. այս և տեղ, աշխ. այստեղ բարբ. -աստէղ-բստէղ-բստէ-բստի-(բս)տա՛ղ ևլն:

Ռուսներէնի, լեհերէնի, չեխներէնի, սերբերէնի, հին սլաւոններէնի ևլն. և այդ լեզուները գործ ածող ժողովրդներն ազգակցութիւնը յայտնի է թէկուզ պատմութիւնից. նոյնպէս յայտնի է, որ ազգակից ժողովրդներ էին գոթերը, իսլանդացիք, անգլոսաքսերը, սաքսոնացիք, բարձր-գերմանացիք և այլն. Մեր գրաբարի և բարբառների միևնոյն լեզուին պատկանելը նոյնպէս հանրածանօթ է: Ուրեմն՝ աարօրինակ չէ, որ այդ լեզուներում գանուում են բառեր կամ քերականական ձևեր, որոնք նոյն են այդ բոլոր ազգակից լեզուներում, կամ նման են իրար:

Սակայն եթէ մենք համեմատենք մի շարք բառեր նաև մի քանի հին և նոր լեզուներում (օր. հայ. տասն, սանսկրիտ daśa, յունարէն δέκα, լատ. decem, հին սլաւոններէն ДЕСАТЬ—առւս. десять, լիթուերէն deszimtis, կամ հայեր. ածեմ սանսկր. ajami, յուն άγω, լատին. ago, գոթ. aka, և կամ հայ. ուտեմ սանսկր. admi, յուն. εἶω, լատ. edo, հին սլաւ. jamь, գոթեր. ita, լիթուեր. ėdmi ևլն.): նոյնպէս կարող ենք ենթադրել, որ այդ լեզուները պահել են նոյնարմատ և նոյնանիշ բառեր և ձևեր և ուրեմն նոյնպէս կարող են ցեղակցական կապեր ունենալ իրար հետ: Նոյնպիսի ազգակցական կապի մասին կարելի է եզրակացնել, համեմատելով արարերէն uktiū, եթովպերէն qéte!, եբրայեց. q<sup>o</sup>tól, արամերէն q<sup>o</sup>tol և այլն: Պէտք է սակայն ի նկատի ունենալ որ բառերի ամեն պատահական նմանութիւն այլ և այլ լեզուներում դեռ նշան չէ վերջիններիս ազգակցութեան. այդպիսի եզրակացութիւն անելու համար հարկաւոր է ոչ միայն մեծ զգուշութիւն, այլ և լեզուարանական պատրաստութիւն:

Այսպիսի համեմատական հիմքերի վրայ կառուցուեց 19-րդ դարի սկզբում հնդեւրոպական համեմատական լեզուաբանութիւնը, որին վիճակուած էր հսկայական դեր խաղալ լեզուի գիտական (այսինքն համեմատական պատմական) ու-

ուումնասիրութեան և ընդհանրապէս հումանիտար գիտութիւններէ պատմութեան մէջ: Ազգակից լեզուների համեմատական ուսումնասիրութեան օրդինը է նաև համեմատական փրականուրիւնը, որ այդպէս կոչուել է տարբերուելու համար հին դպրոցական գործնական քերականութիւնից: Համեմատական քերականութիւնը նոյնպէս ունի մի քանի բաժին: Ֆոնետիկա, մորֆոլոգիա, սինտակսիս և համեմատական բառարան, որոնց մէջ առաջնակարգ տեղ է բռնում ֆոնետիկան: Լայն մաքուր համեմատական քերականութիւնը նոյնն է, ինչ որ պատմական քերականութիւնը. նրա նպատակն է ներկայացնել մէկ կամ մի քանի լեզուների ամբողջ պատմութիւնը նախապատմական շրջանից սկսած մինչև մեր օրերը: Այդ մաքուր համեմատական քերականութեան նիւթ են ծառայում ուսումնասիրուող լեզուների պատմական (գրաւոր) յիշատակարանները և ժամանակակից բարբառները:

IV Առիտանի բաժանումն լեզուաբանութեան մէջ. Լեզուաբանութեան առարկան է, ինչպէս տեսանք, լեզուն ընդհանրապէս կամ բոլոր մարդկային լեզուները: Բայց սրանց թիւը չափազանց մեծ է. բազմաթիւ լեզուներ մեռած և անհետ կորած են, կամ թողել են շնչին հետքեր. կենդանի լեզուներից էլ իւրաքանչիւրը կարող է ունենալ պատմական շրջաններ, կենդանի բարբառներ ևլն. և հասկանալի է ուրեմն այն մեծ զփուարութիւնները, որոնք կապուած են լեզուների գիտական ուսումնասիրութեան հետ:

Առայժմ ուսումնասիրուած է մարդկային լեզուների մի մասը միայն, իսկ շատ լեզուների մասին նոյն իսկ հարևանցի տեղեկութիւնները պակասում են: Լեզուաբանութիւնը իւր համեմատական մեթոդով նախ բոլոր լեզուները համակարգում է ըստ ազգակցութեան և բաժանելով բնականից, նիւրիերի և այլ ստորաբաժանումների, ուսումնասիրում է բոլոր լեզուները արդէն մշակուած եղանակով, համապատասխան դիտելիքների միջոցով:

Վերջիններ օրինակի համար ամենամշակուած և ամենակարևոր լեզուական ընտանիքը—հնդեւրոպականը: Այդ ընտանիքի մէջ մտնում են մի քանի լեզուախմբեր, որոնք կոչուում են ճիւղեր. սրանք են հնդկական ճիւղը, իրանականը, հայկականը, յունականը, գերմանականը ևլն:

Հնդեւրոպականը լեզուների պատմութեան այն շրջանը, երբ գեռ լեզուական ընտանիքը ճիւղերի չէր բաժանուել,

կազմում է նիւթ առանձին համեմատական քերականութեան, որ կոչուում է հնգերոպական լեզուների համեմատական քերականութիւն: Արա նպատակն է երևան հանել հնդեւոպական նախալեզուի քերականական կազմը, հնչիւնները և ձևերը և այդ պիտով ներկայացնել նրա նախնական վիճակը: Հնդեւոպական լեզուաբանութեան այդ բաժնումն է պարզում նաև իւրաքանչիւր հնդեւոպական լեզուի նախապատմական գրութիւնը և նրա հնդեւոպական նախալեզուից ստացած լեզուական ժառանգութիւնը: Այնուհետև իւրաքանչիւր ճիւղի, օր. հնդկական, սլաւոնական, յունական և շն. պատմական քերականութիւնը ցոյց է տալիս մեզ այդ ճիւղի բոլոր պատմական փոփոխութիւնները մինչև նրա արդի վիճակը, որի լիակատար պատկերը մենք գտնում ենք ժամանակակից նկարագրական քերականութեան մեջ: Աերջինս կարող է վերաբերուել ինչպէս դրական լեզուին, այնպէս և բարբառներին ընդհանրապէս և առանձին առանձին:

Այդպիսով միայն հնդեւոպակ. ընտանիքը իւր մտնրամանութիւններով կարող է նիւթ գտնուել տասնեակ և հարիւրաւոր համեմատական քերականութիւնների և պարզ է ուրեմն, թէ որքան անհիմն է այն տարածուած կարծիքը, որը նայնացնում է «համեմատական քերականութիւնը», նայն իսկ լեզուաբանութիւնը հնդեւոպական համեմատական քերականութեան հետ նեղ մտքով: Հասկանալի է նայնպէս, որ միայն մի ընտանիքում, ինչպէսօր. հնդեւոպականում, կարող են աշխատել հարիւրաւոր լեզուիստներ, որոնցից իւրաքանչիւրը ունենալով ընդհանուր լեզուաբանական պատրաստութիւն, մասնազէտ կարող է լինել միայն մի որոշ սահմանում,

V Լեզուաբանութեան նոսրացումը: Մինչև այժմ ասածներից որոշ շարքով պարզուում է լեզուաբանութեան նշանակութիւնը. նա շատ մեծ է և վերաբերում է նախ և առաջ լեզուին: Մարդկային մտքի արտայայտութեան այդ ամենակատարեալ միջոցը, որ միաժամանակ և հոգու ամենակարևոր արտադրութիւններից մէկն է, գտնում է լեզուաբանութեան մէջ իւր բազմաթիւ երևոյթների գիտական և բողոքական լուսաբանութիւնը: Բայց լեզուաբանութեան արդիւնքները կարևոր են նաև մարդկային կուլտուրայի ուրիշ կողմերի համար:

Ամեն անգամ լեզուաբանութեան օգնութեան են դիմում համարեա բոլոր գիտութիւնները, որոնք անցնալ ունին, այս կամ այն կիճառա լեզուական հարցին լուծումն ստանալու, որ յաճախ հիմնական նշանակութիւն է ունե-

նուժ այդ գիտութիւնների համար: Լեզուաբանութեան մեթոդը և որոշ արգելիքները իւրացրել և լայն շարժելով գործադրում են դիցաբանութիւնը (mythologie, Μυθολογία) և ֆոլկլորը. իրաւաբանութիւնն իւր պատմական գիտելիքներում յաճախ կարիք է դրում դիմելու լեզուաբանութեան օգնութեան: Լեզուաբանութեան ցուցմունքներից օգտուում է և մարդաբանութիւնը (անթրոպոլոգիան):

Բանասիրութիւնն առանց լեզուաբանութեան օժանդակութեան անկատար է և անհնարին: Ֆիլոլոգիական գիտելիքներին մէկն է և լեզուն, որ աւելի կատարեալ կերպով ուսումնասիրուում է լեզուաբանութեան մէջ և բանասէրն այդ մասում լայն շարժելով օգտուում է լեզուաբանութեան արգիւնքներից: բաղմամբիւ խանգարուած բնագիւրներ հնացած և նշանակութիւնը կորցրած բառեր, օտար անհասկանալի բառեր ու դարձուածքներ, զանազան յատուկ անուններ ևլն. ստանում են կամ սպասում են իրենց յաճախ շատ կարևոր բացատրութեան միայն լեզուաբանութիւնից: Բառական է յիշել այն հսկայական նշանակութիւնը, որ ունեցաւ բանասիրական գիտութիւնների համար եգիպտական, պարսկական, բաբելական և այլ բնեւագիւր արձանագրութիւնների ընթերցումը:

Պատմութիւնը եւ կուլտուրայի պատմութիւնը իրենց որոշ շրջաններում հիմնուում են միայն լեզուաբանութեան վրայ: Այսպէս [հնդեւրոպական ազգերի նախապատմական շրջանը, որ բոլորովին դուրս է պատմութեան կոմպետենցիայից, առարկայ է դարձել բաղմամբիւ լեզուաբանական հետազօտութիւնների, սրտնց մէջ առաջնակարգ տեղ են զբաւում նրազերի և շիրտի աշխատութիւնները: Այդ հետազօտութիւնները հաղորդում են մեզ մանրամասն տեղեկութիւններ նախապատմական հնդեւրոպացիների նախահայրենիքի, նրանց բաղմամբիւ գաղթերի և կուլտուրական կեանքի մասին: Նոյնպիսի ուսումնասիրութիւններ հնարաւոր կը լինեն նաև ոչ հնդեւրոպական ազգերի պատմութեան նախնական շրջանների վերաբերմամբ, եթէ այդ ազգերի լեզուները բաւարար չափով ուսումնասիրուին: Մասնաւոր ազգերի պատմութեան ամբողջ շրջաններ ևս հիմնուում են գլխաւորապէս կամ բացառապէս լեզուաբանութեան հետեւանքների վրայ:

Նոգեբանութիւնը գանուելով լեզուաբանութեան հետ սերտ յարաբերութեան մէջ և նպաստելով մի շարք լեզուական երեւոյթների ճիշդ բ՚բո՛ւման և լուծման, յաճախ դիմում է լե-

զուաբանութեան օգնութեան: Այդ վերաբերում է ինչպէս անհատական, այնպէս և աւելի մեծ շափերով հասարակական հոգեբանութեան:

Վերջապէս փոքր չէ լեզուաբանութեան նշանակութիւնը դիտարկելիս և յատկապէս լեզուի դասաւանդման համար: Այստեղ շատ աւելի կարևոր է ֆոնետիկայի և լեզուի հոգեբանութեան իւրացումը և նրանց գործադրութիւնը, քան բոլոր մանկավարժական մեծ մասամբ պատահական միջոցները, որոնք իրենց մէջ կայուն շատ քիչ բան ունենալով, յաճախ միայն բարդում են դասաւանդման գործը: Աստուցման հընչական մեթոդը, որ միակ ուղիղ միջոցն է գրութեան (գրաֆիկայի) ներկայ գրութեան տեսակէտից, կարող է ռացիոնալ համարուել միմիայն այդ դէպքում, երբ նա հիմնւում է ֆոնետիկայի (հնչիւնաբանութեան) վրայ: Մայրենի և օտար լեզուներին ինքնուսուցման գործում ևս վերջերս լեզուաբանութիւնը սկսում է խաղալ ամենախոշոր դեր շնորհիւ էքսպերիմենտալ ֆոնետիկայի և նրա արդիւնք ֆոնոգրաֆի:

Այս բոլորից յետոյ խիստ տարօրինակ է ի հարկէ, որ լեզուաբանութեան և նրա արդիւնքների մասին ոչ միայն հասարակութեան լայն խաւերում շատ քիչ բան է յայտնի, այլ և ֆելիոլոգները և լեզուաբանութեան մօտ կանգնած այլ մասնագէտներ յաճախ աշխատում են պրիմիտիւ միջոցներով լուծել այնպիսի հարցեր, որոնց դիտական բացատրութիւնը վաղուց ա, դէն առաջարկուած է լեզուաբանութեան մէջ և այդպիսով ցոյց են տալիս իրենց կատարեալ անգիտութիւնը լեզուաբանութեան վերաբերմամբ:

Ռ. Արախուճան

